ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Բ. Դրան հրահանգները Ընդհանուր Քննիչների իրաւունքների եւ ձեւնհասութեան վերաբերեալ*)

Յօդուած 1. Ընդհ. Քննիչները իրենց կենդրոնատեղին հաստատելու են իրենց պատկանող շրջանի (secteur) այն քաղաքի մէջ, որ իրենց պաշտօնավարութեան կարիքներին աւելի համապատասխան կը դատեն։

Նրանք իրենք որոշելու են այն քննութիւնների ու պատոյների ժամանակն ու եղանակը, որ պիտի կատարեն իրենց շրջաններում, միւնոյն է անձնապէս թէ պատուիրակների միջոցով, այն վերապահութեամբ միայն, որ պարտաւոր են իւրաքանչիւր ամիս թէ Ներքին Գործերի թէ Արդարադատութեան մինիստրութիւններին տեղեկագիր ուղարկել իրենց շրջանների կացութեան մասին՝ քաղաքացիական և դատական վարչութեան տեսակէտներից։

Յօդ. 2 Ընդհ. Քննիչները կոնտրոլի են ենթարկելու իրենց շրջանի քաղաքացիական, արդարադատական, ոստիկանական և ժանդարմական վարչութիւնները։

Հանրային ապահովութեան ուժերի անբաւարար լինելու դէպքում Ընդհ. Քննիչի պահանջմամբ իր տրամադրութեան տակ պիտ դրուին զինուորական ուժեր՝ իր ձեռնհասութեան սահմաններում ձեռք առնուած միջոցների գործադրութեան համար։

Ընդհ. Քննիչների պահանջման դէպքում հեռագրական պաշտօնեաներ պիտի ուղարկուեն նրանց մասնաւոր ընակարանը՝ պաշտօնական թղթակցութիւններ յղելու համար։ Ընդհ. Քննիչների գործածութեան համար մշակուե-

---

*) Այս հրահանգները Հայրապետական Դիւանում ստացուել են ֆրանսերէն լեզուով, որպէսզի «Արարատ»ի ընթերցողները յաջորդաբար տեղեակ լինեն այն ամենին, որոնք վերաբերուում են Տաճկահայաստանի բարենորոգութեանց՝ խմբագրութիւնս թարգմանել տալով՝ յանձնարարում է իւր ընթերցողներին։ Խմբ.

լու է մի յատուկ հեռագրական բառարան՝ ծածկագիր թղթակցելու Մեծ Վեզիրութեան և Ներքին Գործերի ու Արդարադատութեան մինիստրութիւնների հետ։ Ժանդարմներ կամ զինուորներ հաւասարապէս դրուելու են նրանց տրամադրութեան տակ՝ իրենց մասնաւոր բնակարաններում։

Յօդ. 3 Ընդհ. Քննիչներն իրենց պատկանող շրջաններում հսկելու են վիլայեթների և համայնքների օրէնքի որոշումների գործադրման վրայ, ինչպէս և Կայսրութեան այն բոլոր օրէնքների ու կանոնների, որ վերաբերում են քաղաքացիական վարչութեան, արդարադատութեան, ոստիկանութեան ու ժանդարմերիային։

Յօդ. 4 Ընդհ. Քննիչները, նահանգապետների կարծիքն ստանալուց յետոյ, Բ. Դրան ներկայացնելու են պատճառաբանութիւններով ընթացակցուած օրինագծեր, պահանջելու Կայսրութեան այն օրէնքների ձևափոխութիւնը, որոնք չեն համապատասխանում իրենց շրջանի իրական կարիքներին։ Նրանք մշակելու են հաւասարապէս և հրահանգների նախագծեր՝ դիւրացնելու յիշեալ օրէնքների գործադրութիւնն իրենց շրջաններում։

Հրահանգների այս նախագծերն ենթարկուելու են համապատասխան դեպարտամենտի հաւանութեանը։

Յօդ. 5 Ընդհ. Քննիչները նշանակելու են այն վայրերը, որ անհրաժեշտ կարիք ունին քաղաքացիական վարչութեան կազմակերպութեան հաստատման, համաձայն վարչութեան օրէնքի 3-րդ յօդուածի, և այս առթիւ նահանգապետների ու զօրաբանակների հրամանատարների կարծիքն ստանալուց յետոյ պատրաստելու են համապատասխան օրինագծեր։ Նրանք են որոշելու այն գիւղերի և համայնքների այս կամ այն վիլայեթից կախումը, որոնք յաւակնում են երկու վիլայեթների հետ էլ կապուած լինել։ Նրանք հաղորդելու են Ներքին Գործերի մինիստրութեան իրենց կարծիքը այն որոշումների մասին, որ, համաձայն վերոյիշեալ յօդուածի, պիտի տրուին վիլայեթների Ընդհանուր Ժողովներից՝ Սանջակների ու Գաղաների կենդրոնատեղիների փոփոխման, այս Սանջակների ու Գաղաների սահմանների ձևաւորման ու ուղղման, ինչպէս և իրենց վար-

չական բաշխման մէջ տեղի ունենալիք փոփոխութիւնների ուսիթով։

Յօդ. 6 Վիլայեթների օրէնքի 4-րդ յօդուածի համաձայն Ընդհ. Քննիչները մշակելու ու ներկայացնելու են ներքին Գործերի մինիսարութեան յատուկ կանոնների նախագծեր, իրենց պատկանող շրջանում գտնուած նոմադ ցեղերի տեղաւորման ու վարչութեան մասին, հաշուի առնելով նրանց բարքերն ու սովորոյթները, հասարակական կարիքներն ու տեղական պահանջները։ Վալիների հետ միակարծիք, նրանք անհրաժեշտ միջոցներ են ձեռք առնելու կանխելու նոմադների կողմից որ և է աւարառութիւն չէն գաւառամասերում, մինչև որ այս ցեղերը տեղաւորուեն ու ընտելանան երկրագործական ու ինդուստրիական աշխատանքների։

Յօդ. 7 Այլ պարտականութիւնների հետ միասին Ընդհ. Քննիչների պարտքն է և ամրապնդել իրենց շրջանի ազգագրական զանազան տարրերի համերաշխութիւնը, ցրել նրանց անջատող թիւրիմացութիւնները. եթէ կան, ապահովել բոլորի իրաւունքների հաւասարութիւնը և յարգել տալ ընդհանրապէս ամէն մէկի ազատութիւնն ու իրաւունքները։ Ըստ այսմ Ընդհ. Քննիչներն առանձնապէս անմիջական հսկողութիւն են ունենալու՝ կարգադրելու հողային սեփականութեան շուրջը ծագած վէճերը, որոնք որոշ վայրերում ազգաբնակութեան զանազան տարրերը բաժանում են։

Յօդ. 8 Ընդհ. Քննիչների ձեռնհասութիւնն ու պարտականութիւնն է կազմում, ինչպիսի եղանակով էլ այդ լինի, հսկելու՝ որ իրենց վերահսկողութեան տակ և ըստ կարելոյն ամենակարճ ժամանակամիջոցում մի վերջնական մարդահամար կատարուի, որ պիտի հաստատի իրենց պատկանող շրջանների զանազան կրօնների, ազգութիւնների, լեզուների ստոյգ համեմատական թիւը։

Ընդհ. Քննիչներն իրենց պատկանող շրջաններում հսկելու են Կայսերական Կառավարութիւնից հաստատուած հետևեալ որոշումների իրագործման վրայ.—

Վանի և Բաղէշի վիլայեթների Ընդհ. Ժողովների (Մէջ-

լիսի Ուսումի) և Կոմիտէների (Էնջիւմէն) ընտրովի անդամները պիտի լինեն կիսով մահմեդական և կիսով ոչ-մահմեդական։ Կարնի վիլայեթում, եթէ վերջնական մարդահամարը մի տարուայ ընթացքում տեղի չի ունեցել, Ընդհ. ժողովների անդամները պիտի ընտրուին նոյնպէս «կիսով»-ի հիման վրայ, ինչպէս վերոյիշեալ երկու վիլայեթներում։ Սեբաստիայի, Խարբերդի և Տիգրանակերտի վիլայեթներում Ընդհ. ժողովների անդամներն հենց այժմեանից պիտի ընտրուին համեմատականութեան սկզբունքի հիման վրայ։ Այս նպատակով, մինչև վերջնական մարդահամարը, մահմեդական ընտրողների թիւն որոշուած կը մնայ համաձայն վերջին ընտրութիւններին իբրև հիմք ծառայած ցուցակների, իսկ ոչ-մահմեդական ընտրողների թիւը կորոշուի համաձայն իրենց համայնքներից ներկայացուելիք ցուցակների։

Եթէ սակայն նիւթական դժուարութիւններն անդործադրելի դարձնեն ընտրական այս ժամանակաւոր սիստեմը, Ընդհ. Քննիչներն իրաւունք են ունենալու երեք վիլայեթների՝ Սեբաստիայի, Խարբերդի և Տիգրանակերտի Ընդհ. ժողովների աթոռների բաշխման համար մի այլ առաջարկութիւն անել, որ աւելի համապատասխան լինի յիշեալ վիլայեթների իրական կարիքներին ու պայմաններին։

Այն բոլոր վիլայեթներում, ուր Ընդհ. ժողովներն ընտրուելու են համեմատականութեան սկզբունքի հիման վրայ, փոքրամասնութիւնը ներկայացուցիչ է ունենալու Կոմիտէների մէջ (Էնջիւմէն)։

Վարչական ժողովների ընտրովի անդամները, ինչպէս անցեալում, պիտի լինեն կիսով մահմեդական և կիսով ոչ-մահմեդական։

Եթէ Ընդհ. Քննիչներն անյարմար չեն գտնիլ, մահմեդականների և ոչ մահմեդականների հաւասարութեան սկզբունքը գործադրելու են երկու շրջաններում էլ ոստիկանութեան և ժանդարմերիայի հաւաքման համար այն չափով, ինչ չափով ազատ տեղեր կը բացուին։

Հաւասարութեան նոյն սկզբունքը գործադրուելու է հնարաւորութեան չափ նաև երկու շրջանների միջի բոլոր

հասարակական պաշտօնների բաշխման համար։

Յօդ. 9 Ընդհ. Փոխիչները կոնտրոլի են ենթարկելու ուղղակի կամ անուղղակի կերպով բոլոր պաշտօնեաների պաշտօնակատարութեան եղանակը, ստուգելով նրանց ընդունակութեան ու ժրաջանութեան աստիճանը։

Նրանք կազմել են տալու բոլոր պաշտօնեաների «ցուցակ ծառայութեան»-ը։

Յօդ. 10 Ընդհ. Փոխիչները հանգամանքներին նայած պաշտօնանկ են անում այն բոլոր պաշտօնեաներին, որոնց անբաւարար լինելն ու վատ ընթացքը կը հաստատեն, արդարադատութեան յանձնելով նրանց, որոնք օրէնքով յանցաւոր կը լինեն պատժելի արարքի համար. նրանք փոխարինում են հրաժարեցրած ստորադաս պաշտօնեաներին նորերով, որոնք պէտք է լրացնեն օրէնքներով և կանոններով նախատեսուած ընդունելութեան և ունակութեան պայմանները։ Նրանք իրաւունք են ունենալու Նորին Վեհափառութիւն Սուլթանի Կառավարութեան անուանմանը ներկայացնել բարձրաստիճան պաշտօնեաներին։ Կատարուած պաշտօնանկութիւնների մասին անմիջապէս հաղորդելու են համապատասխան մինիստրութիւններին պատճառաբանուած կարճ հեռագիրներով, որոնց պիտի հետևին ութ օրուայ ընթացքում այս պաշտօնեաների գործերն ու մանրամասն պատճառաբանութիւններով մի տեղեկագիր։ Բարձրաստիճան պաշտօնեաներն են՝

Վալին,

Միթեսարիֆը,

Գայմագամները,

Դեֆթերդարը,

Մեքթուբջին,

Հանրային կրթութեան վերատեսուչը,

Երկրագործութեան վերատեսուչը,

Հանրային աշխատանքների գլխաւոր հնարագէտը (ինժեներ),

Կալուածային վարչութեան վերատեսուչը,

Ոստիկանութեան վերատեսուչը,

Մարդահամարի վերատեսուչը,

Առողջապահութեան վերատեսուչը,

Քաղաքական գործերի վերատեսուչը կամ վիլայեթի թարգմանը,

Սանջակի մուհասեբեջին,

Սանջակի թղթակցութեան վերատեսուչը,

Ուսուցման երկրորդական հիմնարկութիւնների և նորմալ դպրոցների (վարժապետանոցների) վերատեսուչները, ինչպէս և ուսուցիչները,

Բոլոր քննիչները (inspecteur)։

Անմիջապէս վալիներից կախում ունեցող պաշտօնեաներին վերաբերող որոշումները հաղորդուելու են իրենց՝ վալիներին։

Յօդ. 11 Եթէ հաստատուի, որ վալիներն այնպիսի գործեր են կատարել, որ անհրաժեշտ է անյետաձգելի խիստ միջոցների ձեռնարկել, Ընդհ. Քննիչները խնդիրը ներկայացնելու են Ներքին Գործերի մինիստրութեան, որն անմիջապէս այդ մացնելու է Մինիստրների Ժողով, և այս վերջինս պիտի որոշում տայ ամենաուշը 4 օրուայ ընթացքում, հաշուելով Ընդհ. Քննիչի հեռագիրը ստացուելու ժամանակից։

Ընդհ. Քննիչից կամ նրա պահանջով հրաժարեցուած պաշտօնեաները չեն կարող նոր պաշտօնի ունակ յայտարարուել, նոյնիսկ պաշտօնից ազատների խմբում, մինչև որ կենդրոնական իշխանութիւնը 10-րդ յօդուածով նախատեսուած հրաժարեցման մանրամասն պատճառաբանուած տեղեկագիրը չստանայ ու չհաստատէ նրա բովանդակութիւնը։

Յօդ. 12 Քաղաքացիական, դատական, ժանդարմերիայի, հանրային աշխատանքների և երկրագործութեան քննիչները կախում ունեն ուղղակի իրենց պատկանած դեպարտամենտներից, բայց վիլայեթների պաշտօնեաների հետ մի աստիճանի վրայ՝ դրուում են Ընդհանուր Քննիչների վերահսկողութեան տակ և Ընդհ. Քննիչների անհրաժեշտ դատած դէպքերում պարտաւոր են այս վերջիններիս ուղարկած ծանուցումները (communication) գործադրել. այս քննիչները ներկայացնում են Ընդհ. Քննիչին

իրենց հրահանգների համաձայն կատարելիք քննութիւնների տեղեկագրի պատճէն, իսկ բնագիրը ուղարկում այն դեպարտամենտին, որից կախում ունին։

Պաշտօնեաների պարտականութիւնների կատարման եղանակի առթիւ եղած քննութիւնների տեղեկագիրները, լինին դրանք կատարուած մինիստրութիւնների թէ Ընդհ. Քննիչի հրամանով, միաժամանակ հաւասարապէս ներկայացուելու են՝ պատճէնը—Ընդհ. Քննիչին, բնագիրը—համապատասխան մինիստրութիւններին։

Յօդ. 13 Ֆինանսական քննիչներն անմիջապէս կախում ունին Ֆինանսների մինիստրութիւնից։ Նրանք այդ մինիստրութեան ուղարկելու են յատուկ կանոնագրութեան համաձայն կատարուելիք քննութեան տեղեկագիրները և պատճէն ընձեռնելու են Ընդհ. Քննչին։ Այն դէպքում, երբ վերջինս անհրաժեշտ կը դատի քննութիւն բանալ մի յատուկ խնդրի առթիւ և այդ կը հաղորդէ Ընդհանուր Քննիչութեան կենդրոնատեղիում գտնուող գլխաւոր Քննիչին, սա պարտաւոր է կամեցուած քննութիւնը կատարել, լինի այդ անձնապէս թէ մի այլ քննիչի ջանքերով, և Ընդհ. Քննիչին տեղեկագիր ներկայացնել։ Ֆինանսների մինիստրութիւնը հաւասարապէս հաղորդակից պիտի լինի նմանօրինակ քննութիւնների։

Յօդ. 14 Եթէ որ և է դատական պաշտօնեայ, որ պատկանում է անփոփոխ դատաւորների բաժանմունքին, յանցաւոր կը գտնուի դատի կամ պաշտօնանկութեան ենթակայ իր արարքով, Ընդհ. Քննիչը դիմում է Արդարադատութեան մինիստրութեան նրան դատի տալու համար։ Մինիստրութիւնը գործին ընթացք պիտի տայ մէկ շաբաթից ոչ ուշ։ Եթէ յիշեալ պաշտօնեան դատաւոր չէ, Ընդհ. Քննիչը պահանջելու է նորա պաշտօնանկութիւնը և ուրիշով փոխարինումը, լինի այդ Արդարադատութեան մինիստրութիւնից թէ Վերաքննիչ Պալատի Ընդհանուր Դատախազից, պաշտօնի կարևորութեան աստիճանի համեմատ։

Անյետաձգելի կարգադրութիւններ պահանջող կարևոր դէպքերում Ընդհ. Քննիչները վայելելու են անմիջական ժամանակաւորապէս պաշտօնից արձակելու (suspension)

իրաւունք, նոյնիսկ դատական անփոփոխ պաշտօնեաների նկատմամբ, այն պայմանով, որ դէպքերն անմիջապէս Արդարադատութեան դեպարտամենտին հաղորդեն։

Յօդ. 15 Ընդհ. Քննիչների ամենակարևոր պարտականութիւններից մէկն է և հսկել՝ որ դատական վիճաբանութիւնները դերծ մնան որևէ արտաքին ճնշումից, վճիռները տեղի ունենան ամենամեծ անկողմնակալութեամբ ու ազատութեամբ և դատաւորներն ոչ մի կերպ չազդուեն։

Յօդ. 16 Դատական պաշտօնեաները պարտադիր են համակերպել Ընդհ. Քննիչների այն ցանուցումներին, որոնք վերաբերում են վարչական բաժնի և դատական գործերի դիւանական աշխատանքների մէջ ներմուծուելիք ռեֆորմներին, սրանց կանոնաւոր ընթացքն ապահովելու համար։

Ըստ այսմ Ընդհ. Քննիչները հսկելու են իրենց պատկանող շրջաններում կայսերական կառավարութեան կողմից հաստատուած հետևեալ որոշումների իրագործման վրայ.—

Իւրաքանչիւր շրջանում օրէնքները, հրամանագրերը և յայտարարութիւնները հրատարակուելու են տեղական լեզուներով։ Իւրաքանչիւր կողմ իրաւունք է ունենալու դատաւորների և վարչութեան առջև գործածել իր լեզուն, երբ Ընդհ. Քննիչն այդ հնարաւոր կը դատէ։ Դատավճիռները գրի են առնուելու տաճկերէն և եթէ հնարաւոր է, թարգմանուելու են կողմերի լեզուներով։

Յօդ. 17 Ոստիկանութեան ու ժանդարմերիայի կազմակերպութիւնն ու վերակազմութիւնը տեղի է ունենալու իւրաքանչիւր շրջանի մէջ Ընդհ. Քննիչի ղեկավարութեամբ ու գիտութեամբ։

Ոստիկանութեան և ժանդարմերիայի կազմակերպման համար անհրաժեշտ դատուած ձևափոխութիւնները, Վալիի գիտութեամբ մատնանշուելու են Ընդհ. Քննիչից և ներմուծուելու կենդրոնական իշխանութիւնից։

Յօդ. 18 Հանրային կրթութեան բոլոր հաստատութիւնների բարձր վերահսկողութիւնը պատկանում է Ընդհ. Քննիչներին։

Ընդհ. Քննիչներն իրենց պատկանող շրջաններում

հսկելու են Կայսերական Կառավարութեան հաստատած հետևեալ որոշումների գործադրման վրայ.—

Իւրաքանչիւր վիլայեթի հանրային կրթութեան բիւջէից ամեն մի ազգագրական տարրի պատկանող մասը որոշուելու է համեմատականօրէն, ամեն մէկի հանրային կրթութեան համար ժողովուած հարկերի մէջ ցոյց տուած մասնակցութեան համեմատ։ Կայսերական Կառավարութիւնն ոչ մի արգելք չի յարուցանիլ, եթէ համայնքներում կրօնակիցները տուրքեր ժողովեն իրենց դպրոցների պահպանման համար։

Յօդ. 19 Ընդհ. Քննիչները ստուգելու են բոլոր մանրամասնութիւններով պետութեան բիւջէի մէջ վիլայեթի հանրային գործառնութիւններին յատկացուած վարկերը և, վալիներին ծանուցանելուց յետոյ, մատնանշելու են ինչ որ իրական կարիքներից աւել կամ պակաս է,—այսպիսով անօգուտ ծախսերը կանխելու և կարիք եղած դէպքում վարկի յաւելումն առաջ բերելու համար։

Յօդ. 20 Ընդհ. Քննիչներն ուսումնասիրելու են այն միջոցները, որ թոյլ են տալիս առաջարկելու կենդրոնական իշխանութեան՝ տասանորդների գանձման այնպիսի մի սիստեմ ընդունել, որ ապահովելով Գանձատան ու հարկատուների շահերը, իւր պարզ ու գործնական բնոյթով, ոչ ժամանակի կորուստ, ոչ էլ երկրագործներին դժուարութիւն պատճառի։

Յօդ. 21 Ընդհ. Քննիչները հարկերի ու թեմմեթուի գանձման եղանակը ուսումնասիրելուց և, այն վայրերի համար, որ անհրաժեշտ կը նկատեն, Վալիների կարծիքը ստանալուց յետոյ, կարող են առաջարկութիւններ ներկայացնել՝ կալուածային վարչութեան վերանորոգման և արդէն սկսուած ընդհանուր բեֆորմների բարելաւման համար։

Յօդ. 22 Ընդհ. Քննիչները իրենց յատկացուած մասնագէտ տեխնիկներին ուսումնասիրել են տալու այն բոլոր միջոցները, որոնց օգտակար կը լինի գիմել, իրենց շրջանի հանքերն ու անտառները պետութեան համար ամենաարդիւնաւէտ եղանակով պահպանելու ու շահագործելու, հողը պարարտացնելու, արտադրութեան ծախսերը նուազեցնե-

լու, հանրային կրթութիւնը տարածելու, ինդուստրիան և առևտուրը քաջալերելու, հաղորդակցութիւնները դիւրացնելու համար. մի խօսքով քննել են տալու ամեն ինչ, որ կարող է նպաստել վիլայեթների մտաւոր և տնտեսական բարձրացման։

Ըստ այսմ նրանք հակելու են, որ Վալիներն իրագործեն այն ռեֆորմները, որ ոչ բիւջէի մէջ վարկի ներմուծումն, ոչ էլ օրէնքի կամ Կայսերական հրամանագրի հրատարակումն են պահանջում։ Ինչ վերաբերում է այն կարգադրութիւններին, որոնք նախադրում են կամ ընդհանուր բիւջէի մէջ յատուկ վարկերի ներմուծման կամ թէ առանձին օրէնքի ու Կայսերական վաւերացման գոյութիւնը, այդ առթիւ դիմելու են ձեռնհաս դեպարտամենտներին։

Յօդ. 23 Ընդհ. Քննիչներից իւրաքանչիւրին իրենց գործառնութիւնների կատարման համար յատկացուելու են՝

1. Մի ընդհանուր քարտուղար–դիւանապետ և բաւարար թուով խմբագրողներ, թարգմանողներ, գրագիրներ և ծառայողներ։

2. Մի քննիչ քաղաքացիական, ոստիկանական և ժանդարմական գործերի համար։

3. Մի քննիչ դատական գործերի համար։

4. Մի քննիչ հանրային կրթութեան համար։

5. Մի մասնագէտ քննիչ, օտար կամ օսմանցի, երկրագործութեան համար։

6. Մի մասնագէտ քննիչ, օտար կամ օսմանցի, հանրային աշխատանքների համար։

7. Մի թիկնապահ, որ պէտք է ընտրուի ժանդարմերիայի օտար սպաներից։

8. Մի օտար անձնական քարտուղար։

9. Մի քրդերէնի թարգման։

10. Մի հայերէնի թարգման։

Այս պաշտօնեաներն անուանուելու են Ընդհ. Քննիչների ցուցումով կամ հաւանութեամբ, իսկ նրանց իրաւունքները սահմանուելու են Ընդհ. Քննիչների աջակցութեամբ մշակուած մի յատուկ կանոնադրութիւնով։

Ֆրանս. թարգմ. Վ. ադինակ Ն. Յակոբեան